«ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 9-ի N 556-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

_

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի N 556-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 9-ի «Տրանսֆերային գնագոյացման մեթոդների կիրառության կարգը սահմանելու մասին» N 556-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- Որոշման վերնագրում և Որոշման տեքստում «մեթոդների» բառից հետո լրացնել «առանձնահատկությունները և» բառերը.
- Որոշման հավելվածի 3-րդ կետից հանել «, ԱԱՀ-ով հարկման բազան» բառերը.
- Որոշման հավելվածի 22-րդ կետում՝

ա. հանել «օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն» բառերը.

բ. «մեթոդներից» բառից հետո լրացնել «որևէ» բառը.

- Որոշման հավելվածի 25-րդ կետում «սկզբունքին՝ օրենսգրքի 371-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն» բառերը փոխարինել «սկզբունքին։» բառով.

- Որոշման հավելվածում լրացնել նոր 25.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ՝

«25.1. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքում կիրառվող գինը գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթից դուրս, որը հանգեցնում է շահութահարկի հարկման բազայի ավելացման կամ հարկային վնասի նվազեցման կամ ռոյալթիի բազայի ավելացման, ապա հարկային մարմինը կարող է ճշգրտել վերահսկվող գործարքում կիրառվող գինը՝ օրենսգրքի 371-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն։»։

- Որոշման հավելվածի 29-րդ կետում «սկզբունքին՝ օրենսգրքի 371-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն» բառերը փոխարինել «սկզբունքին։» բառով.
- Որոշման հավելվածի 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«30. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքում կիրառվող հավելագինը գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթից դուրս, որը հանգեցնում է շահութահարկի հարկման բազայի ավելացման կամ հարկային վնասի նվազեցման կամ ռոյալթիի բազայի ավելացման, ապա հարկային մարմինը կարող է ճշգրտել վերահսկվող գործարքում կիրառվող հավելագինը՝ օրենսգրքի 371-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն։»։

- Որոշման հավելվածի 34-րդ կետում «սկզբունքին՝ օրենսգրքի 371-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն» բառերը փոխարինել «սկզբունքին։» բառով.
- Որոշման հավելվածի 35-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«35. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքում կիրառվող հավելագինը գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթից դուրս, որը հանգեցնում է շահութահարկի հարկման բազայի ավելացման կամ հարկային վնասի նվազեցման կամ ռոյալթիի բազայի ավելացման, ապա հարկային մարմինը կարող է ճշգրտել վերահսկվող գործարքում կիրառվող հավելագինը՝ օրենսգրքի 371-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն։»։

- Որոշման հավելվածի 39-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«39. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքում ստացված ֆինանսական ցուցանիշը գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթից դուրս, որը հանգեցնում է շահութահարկի հարկման բազայի ավելացման կամ հարկային վնասի նվազեցման կամ ռոյալթիի բազայի ավելացման, ապա հարկային մարմինը կարող է ճշգրտել վերահսկվող գործարքի արդյունքում ստացված ֆինանսական ցուցանիշը՝ օրենսգրքի 371-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն։»։

- Որոշման հավելվածի 41-րդ կետում «տարբերությունը։» բառից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Շահույթի բաշխման մեթոդը կիրառելիս անհրաժեշտ է հստակեցնել վերահսկվող գործարքի մասով համատեղ շահույթը կամ մնացորդային շահույթը։».
- Որոշման հավելվածի 44-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«39. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքում ստացված շահույթը (վնասը)

գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթից դուրս, որը հանգեցնում է շահութահարկի հարկման բազայի ավելացման կամ հարկային վնասի նվազեցման կամ ռոյալթիի բազայի ավելացման, ապա հարկային մարմինը կարող է ճշգրտել վերահսկվող գործարքի արդյունքում ստացված շահույթը (վնասը)՝ օրենսգրքի 371-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան